ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԻՄԱՑԱԲԱՆԱԿԱՆ ԾԱՎԱԼԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

ՌՈԲԵՐՏ ԿԱՅՇՈՒՆԻ

Պրակտիկայի իմացաբանական ծավալի այժմյան մեկնաբանությունների հիմնական դժվարությունն այն է, որ ձգտում են միայն մեկ սահմանման մեջ զուգակցել նրա թե՛ սուբստանցիոնալ, թե՛ ֆունկցիոնալ բնորոշումները։ Դա առաջ է բերում պրակտիկայի՝ որպես ճանաչողության դետերմինանտի, ամբողջությունը երկճեղքելու և նրա ներքնապես փոխպայմանավորված մոմենտները մեկը մյուսի կողքին իբրև ինքնուրույն երևույթներ արձանագրելու միտում։

Այդ միտումն առանձնապես ակնառու է պրակտիկայի իմացաբանական ֆունկցիայի հարցում, որտեղ ճանաչողությունը պրակտիկայով պայմանավորելու ձևերի կոնկրետ վերլուծությունը շատ հաճախ նենգափոխվում է պարզապես «օրինակների գումարով», իսկ ճանաչողության նկատմամբ պրակտիկայի հարաբերությունը ներկայացվում է «տարբեր առումներով» (մի առումով որպես հիմք, մեկ ուրիշով՝ նպատակ, երրորդով՝ չափանիշ)։ Ընդ որում, պրակտիկան և ճանաչողությունը, վերցված սոսկ իրենց սուբստանցիոնալ կեցության մեջ, անխուսափելիորեն հանդես են գալիս որպես բացարձակ հակադիր և միմյանց հետ սոսկ արտաքնապես փոխկապակցված գործելաձևեր։

Պրակտիկայի, որպես ճանաչողության ամբողջական դետերմինանտի (պրակտիկայի իմացաբանական լրիվ ծավալի), վերլուծությունը ենթադրում է տեսության և պրակտիկայի միասնության ձևերի քննում երկու տեսանկյունից. տեսականը՝ գործնականի ոլորտում (միասնության ծագումնաբանական տեսանկյուն) և գործնականը՝ տեսականի ոլորտում (միասնության ֆունկցիոնալ տեսանկյուն)։ Առաջին տեսանկյունը բացահայտում է պրակտիկայի էությունը որպես ճանաչողության աղբյուր (գիտելիքը առաջ է գալիս որպես զգայական-առարկայական գործունեության անհրաժեշտ, բայց և նրա կողմնակի արդյունք)։ Երկրորդ տեսանկյունը տանում է դեպի տեսության բնորոշումը որպես պրակտիկայի զարգացման գործոն (գիտելիքը վերածվում է անմիջական արտադրողական ուժի), իսկ դրա միջոցով՝ դեպի պրակտիկայի ըմբռնումն իբրև մտածողության առարկայական ճշմարտության չափանիշ։ Իր իմանենտ բնորոշումների (ծագումնաբանական և ֆունկցիոնալ) միասնության մեջ պրակտիկան ներկայանում է որպես մի համակարգային ամբողջություն, իմացության սուբստանցիոնալ հիմք, որի բացահայտումը որոշակի փուլեր է անցնում օբյեկտի մասին համապատասխան գիտելիքների կազմավորման ընթացքում։

Չհավակնելով հարցի սպառիչ լուծմանը, փորձենք ամենաընդհանուր գծերով հետևել հիշյալ պրոցեսի ներքին տրամաբանությանը, կոնկրետացնելով այն պրակտիկայի զարգացման ընթացքում օբյեկտի իմացության կազմավորման նկատմամբ։ Ընդ որում, այդ վերլուծության համար որպես նախադրյալ ելնում ենք Կ. Մարքսի այն դրույթից, թե՝ մարդիկ երբեք տեսական վե-

բաբերմունքով չեն սկսում իրենց մոտեցումն արտաքին աշխարհի առարկաներին։ Նրանք դա սկսում են այն բանով, որ պրակտիկ գործողությունների օգնությամբ ակտիվորեն տիրապետում են արտաքին աշխարհի առարկաներին՝ իրենց պատմականորեն առաջացած պահանջմունքները բավարարելու համար, և, իբրև դրա հետևանք, առանձնացնում են առարկաների՝ իրենց համար նշանակալից հատկանիշներն ու ճանաչում առարկաները[1]։

Եթե պրակտիկայի նպատակը բնութագրվի որպես բնության վերափոխում կենսագործունեության միջոցի, իսկ ավելի նեղ իմաստով՝ բնության առարկայի վերափոխում պահանջմունքի առարկայի, ապա պարզ է, որ աշխարհի նկատմամբ մարդու այդ վերաբերմունքի առանձնահատկությունն այն է, որ բնության առարկան այս դեպքում անհրաժեշտաբար վերցվում է սուբյեկտի նպատակի, նրա պահանջմունքների հետ ունեցած հարաբերության մեջ և այդ հարաբերությունից դուրս այն գործողության օբյեկտի սահմանում չի ստանում։ Բայց դա առարկան սահմանելու հատուկ եղանակ է, նպատակի միջոցով՝ այն բնորոշելու եղանակ, երբ առարկան դուրս է բերվում համընդհանուր փոխկապակցությունից շնորհիվ նրա հատկանիշների, որոնք կարող են տվյալ առարկան վերածել որոշակի նպատակի ծառայող միջոցի։ Իբրև բնության կոնկրետ առարկա, այն հատկությունների մի ամբողջական համակցություն է, որի մեջ նպատակի ծառայելու հատկությունը նրա որոշակիության սոսկ մի կողմն է, որը, սակայն, պրակտիկ վերաբերմունքի, նպատակահարմար գործունեության կոնտեքստում փոխարինում է առարկայի «տոտալ որոշակիությանը», հանդես է գալիս որպես նրա համարժեքը։

Հետևաբար գործունեության պատմական այս կամ այն ձևի սահմաններում ռեալ առարկան գործառնում է որպես վերացական առարկա[2] (գործունեության առարկա)։ Այդ պատճառով էլ նպատակադրման պրոցեսում առարկայի մի հատկանիշի անջատումը որպես ամբողջական առարկայի համարժեքի, անխուսափելիորեն ծնում է վերջինիս վերացական հասկացությունը, որը, ինչպես տեսնում ենք, պայմանավորված է առարկայի՝ որպես որոշակի նպատակ իրագործելու միջոցի նկատմամբ պրակտիկ վերաբերմունքի առանձնահատկությամբ։ Այդ էլեկտային վերացարկումների անհրաժեշտությունն արդարացված է այն բանով, որ բնությունից մարդու գործնական և տեսական անջատման պատմական պրոցեսն իրագործվում է նպատակի՝ որպես իրականության նկատմամբ մարդկային վերաբերմունքի առանձնահատուկ ձևի գիտակցում, որից դուրս, ինչպես դա «հանճարեղորեն կռահել է» Հեգելը, բնության առարկան կներկայանա որպես մի ինչ-որ «անտարբեր արտաքին» և, իբրև այդպիսին, չի կարող լինել ո՞չ իմացության օբյեկտ, ո՞չ էլ նպատակաուղղված գործունեության օբյեկտ։ Իր այդ ձևի մեջ, ինչպես գրել է Կ. Մարքսը, այն ընդհանրապես «մարդկային առարկա չէ»[3] և միայն «մարդ-

---

[1] К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 19, с. 377.

[2] Մեր կարծիքով «վերացական առարկա» տերմինի՝ գրականության մեջ հանդիպող բազում սահմանումներից առավել համապատասխանը Դ. Գորսկու սահմանումն է. «Վերացական առարկաների թվին են պատկանում առարկաների վերացարկման ճանապարհով առանձնացված հատկանիշները, կողմերն ու վիճակները..., ինչպես նաև դասերը (ծավալները), որոնք դիտվում են իբրև հատուկ, ինքնուրույն առարկաներ» (Д. П. Горьский, Вопросы абстракции и образования понятий, М., 1961, с. 108).

[3] К. Маркс и Ф. Энгельс, Из ранних произведений. М., 1956, с. 640.

կային առարկա» դառնալով է (Նպատակի միջոցով սահմանվելով որպես «պատմական սուբյեկտի պահանջմունքի առարկա) բնության առարկան վերածվում պրակտիկայի ու ճանաչողության առարկայի։

Եվ այսպես, նպատակադիր գործունեության մեջ (զգայական-առարկայական գործունեության սկզբնական օղակում) անհրաժեշտաբար առաջ է գալիս առարկայի վերացական սահմանումը, ըստ որում այդ վերացարկման սահմանները մշտապես ուրվագծված են նպատակի որպես գործունեության օրենքի բովանդակությամբ, իսկ վերջին հաշվով մարդու կողմից բնության գործնական տիրապետման չափերով։ Սակայն առարկայական գործունեության ակտերի մեջ նպատակի իրագործման տրամաբանությունն այնպիսին է, որ գործունեության արդյունքներում առարկայի բնորոշման վերը նշված միակողմանիությունը հաղթահարվում է և վերստեղծվում է կոնկրետ առարկան։

Բանն այն է, որ իրական, գործնական պրոցեսում մարդը, բնության առարկաները վերածելով սուբյեկտիվ նպատակների իրագործման միջոցների և այդ առարկաների մասին ստեղծելով վերացական հասկացություններ, փաստորեն գործառնում է ոչ թե վերացական առարկաներով, այլ իրական առարկաներով աշխատանքի միջոցներով, որոնք բացի սոսկ մարդուն և նրա նպատակներին ծառայելուց, նաև մի ինչ-որ ինքնին բան են որպես բնության առարկաներ։ Առարկաների օգտագործումը որպես նպատակի իրականացման միջոցներ նրանց մեջ երևան է բերում մի շարք այնպիսի հատկանիշներ, որոնք չեն մտել այդ առարկաների նպատակադիր ձևերի սահմանման մեջ և հատուկ են դրանց անկախ այն բանից, թե ինչ դեր են կատարում արտադրության պրոցեսում։ Որքանով որ նպատակաուղղված վերափոխման արդյունքը նյութական արդյունք է, որը առաջ է եկել գործունեության առարկայի հետ աշխատանքի միջոցի ռեալ փոխազդեցության պրոցեսում և ունի մի շարք այնպիսի հատկություններ, որոնք ծրագրավորված չեն նպատակի իդեալական իրագործման մոդելում, ապա այստեղ կարելի է խոսել նպատակի և գործունեության արդյունքի չհամընկնման կամ համընկնման աստիճանի մասին։ Գործունեության նպատակի և արդյունքի չհամընկնելը բացահայտում է այդ պրոցեսի ներքին հակասությունը, որն էլ հենց պրակտիկայի ինքնաշարժման աղբյուրն է։

Գործունեության արդյունքների մեջ նպատակասլաց գործողության ակտն իր հարաբերական ավարտին է հասնում և նախանշում է անցումը դեպի ռացիոնալ ճանաչողություն։ Գործնական վերափոխման անմիջական արդյունքն առարկայաթափվում է և պատմական սուբյեկտի կողմից գիտակցվում որպես նրա օբյեկտը, որի իմանենտ բովանդակությունը ոչ այլ ինչ է, քան «առարկայական մարմնավորումն... այն առանձնահատուկ մարդկային, հասարակական նշանակության, որը նրանք (գործունեության արդյունքները—Ռ. Կ.) ձեռք են բերում մարդկային գործունեությամբ, պրակտիկայով վերափոխվելու ընթացքում»[4]։ Առանց մարդկային գործունեության արդյունքների օբյեկտիվ նշանակության գիտակցման, առանց դրանց առարկայական բնութագրերի բացահայտման բնության հետագա ներգրավումը մարդկային կենսագործունեության ոլորտ անհնար է։

---

[4] И. В. Бычко. Познание и свобода. М., 1969, с. 41

Պրակտիկան որպես իր զարգացման անհրաժեշտ պայման պահանջում է ճանաչողություն։ Ճանաչողության այդ ֆունկցիայի անհրաժեշտությունը պայմանավորված է այն բանով, որ հասարակություն-սուբյեկտի պատմականորեն ձևավորված որոշակի պահանջմունքներին համապատասխանող պրակտիկ նպատակները իրագործելու ընթացքում պահանջմունքի առարկայի արտադրման եղանակը բացահայտում է իր սահմանափակությունը՝ արտադրության իրագործման համապատասխան միջոցների անբավարար լինելը, որը, վերջին հաշվով, հասցնում է գործունեության նպատակի և նրա արդյունքների անհամատեղելիության («չկատարված նպատակ»)։ Մյուս կողմից, ինչպես տեսանք, որևէ առարկայի նպատակ իրագործելու միջոց դառնալու բուն պրոցեսն անխուսափելիորեն սահմանափակում է նրա բովանդակությունն այն ֆունկցիաներով, որոնք նա կատարում է արտադրության պրոցեսում և իրեն է ամրագրում այդ, կարծես, սպասարկու նշանակությունը։ Բայց գործունեության առարկայացած արդյունքների մեջ ի հայտ են գալիս առարկաների ոչ միայն այդ սպասարկու հատկությունները, որոնք ներգրավված են պրակտիկայի ոլորտը, այլև այնպիսի հատկանիշների մի համակցություն, որոնք օբյեկտիվորեն հատուկ են դրանց՝ անկախ առարկայական գործունեության մեջ այդ հատկանիշների օգտագործման եղանակից («գերակատարված նպատակ»)[5]։ Այդ հավելուրդային արդյունքը ստեղծում է յուրօրինակ ինֆորմացիոն վակուում, որի վերացումն էլ հենց ճանաչողության անհրաժեշտ ու մերձավոր նպատակն է։ Սրա էությունն արտահայտվում է առարկայի համընդհանուր բնութագրերի բացահայտման մեջ, այսինքն՝ այն բանի բացահայտման, թե իր էությամբ առարկան ինչ է իրենից ներկայացնում, անկախ նպատակադրման ընթացքում նրա մասին ստեղծված պատկերացումներից։

Պրակտիկ պրոցեսի նախորդ վերլուծությունը ցույց տվեց, որ գործունեության արդյունքը հանդես է գալիս ոչ միայն նյութականի, այլև գիտելիքի իդեալական ձևով, որի նպատակն է մարդու գիտակցության մեջ իր գործունեության «էական մոմենտների» արտացոլումն ու ամրապնդումը։ Դրանք էլ հենց բնութագրում են նյութական արդյունքի գոյացման ամբողջական պրոցեսը։ Այդ գիտելիքն առաջ է գալիս անմիջականորեն պրակտիկայի ընթացքում իբրև ռեֆլեքս աշխատանքի պրոցեսի նկատմամբ և կարող է որակավորվել որպես վարձնական գիտելիք, որն ունի երկակի բնույթ. վերափոխման նպատակի նկատմամբ այն հանդես է գալիս որպես արդեն ստեղծված արդյունքների ռեֆլեքս (հետևաբար, որպես արդեն գոյացած, մի բան դարձած. վերափոխման պրոցեսի արդյունք), իսկ իմացության նպատակի նկատմամբ (որտեղ գիտելիքը ճանաչողության արդյունք է) որպես ելակետ, օբյեկտի տեսական յուրացման սկիզբ։ Հենց իր այս վերջին որակով փորձնական գիտելիքը հանդես է գալիս որպես տեսական ճանաչողության իմացաբանական հիմք, քանի որ առանձնացնում է վերջինիս օբյեկտը՝ իրականության պրակտիկորեն յուրացված հատվածը, սոցիալական այն նշանակությունների համակարգում, որոնք նա ստանում է մարդու կողմից այն պրակտիկորեն յուրացվելու ընթացքում։

---

5 Նպատակի և արդյունքի չհամընկնելու ձևերի հանգամանալից վերլուծությունը տրված է Ն. Ն. Տրուբնիկովի գրքում (Н. Н. Трубников, О категориях. «Цель», «Средство», «Результат», М., 1967, с. 125—137. Այս հարցի մասին տե՛ս նաև Б. А. Воронович, Философский анализ структуры практики. М., 1972, с.181).

Ահա թե ինչու ճանաչողության պայմանավորվածությունը պրակտիկայով (որպես նրա հիմք) կայանում է նրանում, որ ճանաչողությունը «իբրև ելակետեր մշտապես գործառնում է իրերի այն նշանակություններով, որոնց բացահայտման միակ միջոցը մարդու, որպես սոցիալական վերափոխիչ էակի, գործնական, զգայական-առարկայական, նյութական փոխներգործությունն է նրանց հետ»[6]։

Ճանաչողության զարգացման ընթացքում այդ պրակտիկ հիմքի գիտակցումը պայմանավորված է արդեն իսկ ճանաչողության նպատակադրմամբ՝ այնպիսի գիտելիքների արտադրմամբ, որոնք ունեն իրականության առարկաների սահմանումների արժեք, ինչը և կտանի դեպի գիտելիքի իմանենտ պահանջի, այն է՝ օբյեկտին իր համապատասխան լինելը հիմնավորելու պահանջի առաջացումը։ Իսկ գիտելիքի հիմնավորման պրոցեսի առանձնահատկությունը, ի տարբերություն նրա առաջացման պրոցեսի (շարժման ուղղության տեսակետից), այն է, որ այստեղ իբրև ելակետ է վերցվում ոչ թե իմացության պրոցեսի իսկական ակունքը, այսինքն՝ պրակտիկան, այլ գիտելիքի արդեն իսկ կազմավորված ձևը, իմացության արդեն առկա արդյունքը։ Այնուհետև, գիտելիքի միջնորդավորվածությունները բացահայտելու ճանապարհով հետազոտվում է նրա լինելիության ներքին տրամաբանությունը։ Գիտելիքի այդ վայրընթաց շարժումը (ըստ տրամաբանական որոշակիությունների) իրականում նրա վերընթացն է դեպի իր հիմքը։ Դրա համար էլ գիտելիքի այդ նպատակով ձեռնարկված վերլուծությունը պետք է ուղղված լինի այն բանին, որ ցույց տա, թե ինչպես է պրակտիկայի անհրաժեշտություն առաջ գալիս ճանաչողության զարգացման բուն տրամաբանությունից, այսինքն՝ իրականության իդեալական յուրացման պրոցեսից։

Ընդհանուր առումով ճանաչողության շարժումը կարելի է պատկերացնել որպես գիտելիքի տրամաբանական ձևակազմությունների մի հաջորդական շարք, որում գնալով ավելի ու ավելի համապատասխան է ծավալվում օբյեկտի որոշակիությունը ճանաչողության սուբյեկտի համար։ Սակայն ակներև է, որ գիտելիքի մի ձևից մյուսին անցնելու անհրաժեշտ պայմանը առարկային հին գիտելիքի անհամապատասխան լինելու բացահայտումն է։ Բայց այստեղ էականն այն է, թե ինչպե՞ս է այդ անհամապատասխանությունը ճանաչողության զարգացման ընթացքում ի հայտ գալիս, ի՞նչն է մտքին ստիպում անցնել օբյեկտի նոր սահմանմանը և ինչպիսի՞ն է մտածողության առարկայական ճշմարտության չափանիշը։ Գիտելիքի այն ձևերի մակարդակում, որոնք անմիջականորեն արտացոլում են առարկայական փոխազդեցության սխեմաները, որտեղ ճանաչողությունն իրագործվում է «պրակտիկայի տրամաբանությամբ», օբյեկտի նոր սահմանմանն անցնելը տեղի է ունենում ճանաչողական հարաբերության «շրջման» հետևանքով։ Սա պայմանավորված է պրակտիկ իրադրության «շրջումով», երբ ռեալ օբյեկտը ներառվում է առարկայական փոխազդեցության մի նոր ոլորտ ու երևան է բերում նախկինում չբացահայտված նոր հատկանիշներ։ Պրակտիկ գործունեության ընթացքում օբյեկտի մոտ բացահայտված հենց այդ նոր հատկանիշներն էլ կազմում են այն գիտելիքի հիմքը, ըստ որի օբյեկտն այնպիսին չէ, ինչպիսին պատկերացվում է

---

[6] С. Н. Смирнов, Диалектика отражения и взаимодействия в эволюции материи, М., 1974, с. 340—341.

մտքում, և որ անհրաժեշտ է օբյեկտի մի նոր սահմանում։ Այսպիսով, պրակտիկայի նպատակի և արդյունքի չհամընկնելը հիմք է դառնում առարկային գիտելիքի անհամապատասխան լինելը գիտակցելու և ճանաչողությունը նրան համապատասխանող ուղղությամբ մղելու համար։ Եվ քանի որ այս դեպքում առաջանում է նոր առարկա, ապա հենց այդ առարկան էլ, ըստ էության, հանդես է գալիս որպես մտածողության ճշմարտության չափանիշ և «մտքի նոր սահմանումներին» անցնելու հիմք։ Այստեղ չափանիշը նույնպես հարաբերական է ու շարժուն, ինչպես առարկան։ Այսպիսով, միևնույն ռեալ օբյեկտը, գործածելով գործունեության տարբեր ձևերի ոլորտներում, ճանաչող սուբյեկտին է ներկայանում իր առարկայական բնութագրումների բազմազանությամբ։ Դրա պատճառն այն է, որ աշխարհի տարերային-պրակտիկ յուրացման մակարդակում առարկայականի հիմքում ընկած են օբյեկտների հետ գործողությունների պատմականորեն սահմանափակ ձևերը՝ վերցված իրենց առանձնության մեջ ու մեկը մյուսի կողքին, այլ ոչ թե իբրև գործունեությունների մի համակարգ։ Այդ մակարդակում ճանաչողության ոչ ռեֆլեկտորայնությունը երևան է գալիս ոչ միայն այն բանում, որ այստեղ չի գիտակցված մտային առարկաների էմպիրիկ բազմազանության համընդհանուր հիմքը, որը պահանջում է «օբյեկտ-գիտելիք» մակարդակից անցում «գիտելիք-սուբյեկտ» մակարդակին, երբ գիտելիքի ձևերն իրենք են դառնում ճանաչողության օբյեկտ, այլև այն բանում, որ առարկայական գործունեությունը, այսինքն՝ պրակտիկան չի գիտակցված իբրև ճանաչողության համընդհանուր հիմք ու վերցված է իր «այսրոպեության» իմաստով և ոչ թե հասարակական-պատմական չափերի մեջ։ Այդ պատճառով էլ գիտելիքի զարգացումն այստեղ իրագործվում է որպես անցում մի ճշմարտությունից մեկ ուրիշ ճշմարտության, այլ ոչ իբրև անցումներ բուն իսկ ճշմարտության պրոցեսի ներսում։ Բայց, մյուս կողմից, առարկայի պատմական շարժունությունը գործունեության սիստեմում պարզունակ անցում չէ «մեկից մյուսին»։ Օբյեկտի պատմականորեն ծավալվող սահմանումների համակարգում միշտ էլ ի հայտ է գալիս մի նույնական, անփոփոխ բովանդակություն, որը բնութագրում է առարկայի կայուն, էական կողմերը և կապերը, որոնք ամրագրված են փորձով (վերացական համընդհանրության ձևով) և կազմում են նրա օբյեկտիվ առարկայական նշանակության հիմքը։

«Պրակտիկայի տրամաբանությամբ» ճանաչողության զարգացման ընթացքում օբյեկտի սահմանման «մեխանիզմը» կարելի է պատկերացնել հետևյալ ձևով։

Օբյեկտի առաջին սահմանումը ձևավորվում է անմիջականորեն նրա պրակտիկ յուրացման ընթացքում և իրենից ներկայացնում է մի անմիջական ու վերացական գիտելիք, քանի որ օբյեկտի առարկայական բնութագրերի կոնկրետ բազմազանությունից անջատվում են այնպիսիները, որոնք ենթակա են բացահայտման առկա պրակտիկայի միջոցով։ Վերջինս մշտապես հանդես է գալիս հասարակական արտադրության զարգացման մակարդակով պայմանավորված պատմականորեն իր կոնկրետ ձևերի մեջ։ Այդ գիտելիքի ամրապնդումը սուբյեկտի մոտ առաջ է եկել պրակտիկ փորձի՝ որպես սպառման առարկայի արտադրման եղանակի, ամրապնդման և մարդու կենսագործունեության ընթացքում այդ փորձի «պարզ վերարտադրման» անհրաժեշտու-

թյունից։ Քանի որ այստեղ կոնկրետ առարկան փոխարինված է վերացականով, իսկ օբյեկտի երևույթի իմացությունը (թե ինչ է այն սուբյեկտի համար) նույնացվում է նրա էության հետ (թե ինչ է այն «ինքնին» վերցրած), ապա գիտելիքի օբյեկտիվացման պրոցեսում (պրակտիկայի «պարզ վերարտադրության» սահմաններում) ի հայտ է գալիս նրա անհամապատասխանությունն առարկային։

Օբյեկտի երկրորդ սահմանումն առաջ է դալիս առարկայական փոխազդեցության ոլորտի էքստենսիվ ընդլայնման հետևանքով, օբյեկտի հետ գործունեության ձևի փոփոխմամբ, բայց պրակտիկայի պատմական միևնույն ձևի սահմաններում (որը բնութագրվում է վերափոխման միջոցների զարգացման որոշակի մակարդակով)։ Այն ներառում է օբյեկտի նոր հատկությունների մասին գիտելիքներ, որոնք չեն պարունակվում նրա հին ձևի մեջ և ժխտում է վերջինս՝ որպես ճանաչվող օբյեկտի բնությանը անհամապատասխան ձև։

Քանի որ օբյեկտը նույնացվում է պրակտիկայում բացահայտված այդ նոր հատկությունների հետ, ուստի երկրորդ սահմանումը անհրաժեշտաբար դառնում է առաջինի վերացական հակադրությունը և նրա ժխտումը «իր իսկ առումով», այսինքն՝ որպես օբյեկտի այլ որոշակիություն։ Ուրեմն, երկու սահմանումներն էլ ճիշտ են, բայց տարբեր առումներով կամ յուրաքանչյուրն իր առումով, քանի որ դրանք արձանագրում են առարկայի օբյեկտիվ հատկանիշները՝ բացահայտված դրանց հետ սուբյեկտի պրակտիկ, նյութական փոխազդեցության ընթացքում, բայց վերջինի տարբեր նպատակների հանդեպ, որի պատճառով էլ այդ սահմանումներն իրենց ճշտության մեջ սահմանափակված են յուրաքանչյուրն «իր առումի» շրջանակներով (հարաբերական ճշմարտություն)։ Բայց քանի որ երկու սահմանումներն էլ, այնուամենայնիվ, միևնույն օբյեկտի սահմանումներն են, ապա այստեղ առկա է այն հակասությունը, որ միևնույնի մեջ մի բան և՛ հաստատվում է, և՛ ժխտվում։ Այդ հակասությունն անտինոմիա-պրոբլեմի ձևով տեսական ճանաչողության առջև խնդիր է դնում գտնել առարկայի մի այնպիսի սահմանում, որի մեջ առաջին երկուսի հակադրությունը հաղթահարվի դրանց միաձուլմամբ և առարկան սահմանվի ոչ թե մարդու այս կամ այն մասնավոր նպատակներին համապատասխան, այլ ըստ իր էության։ Որոնվող սահմանումը, ուրեմն, պետք է արտահայտի առարկայի ոչ թե մի առանձին հատկությունը կապված այս կամ այն կոնկրետ գործնական իրավիճակի հետ, այլ համակցությունն այնպիսի հատկությունների, որոնք կարող են առարկայի բնութագրերը լինել ցանկացած գործնական իրավիճակում, բնության հետ մարդու փոխներգործության բոլոր իրական ու հնարավոր ձևերում։

Դրանում է տեսության, իբրև իրականության իդեալական վերափոխիչի, առանձնահատկությունը՝ որպես պրակտիկան կանխող, նրանից առաջ անցնող արտացոլում իմաստով, երբ տեսությունը դուրս է բերում ճանաչողությունը բնության վրա հասարակության թողած պրակտիկ հետքի սահմաններից։ Այդպիսի արտացոլման անհրաժեշտությունը պայմանավորված է իր իսկ հասարակական-պատմական պրակտիկայի պահանջներով, որը կարիք ունի օբյեկտի այնպիսի իմացության, որի ճշմարտությունը երաշխավորված լինի նրա ձեռք բերման բուն եղանակով (ճշմարտության տրամաբանական չափանիշ), և որը օբյեկտն արտացոլի իր համընդհանրության ու անհրաժեշտության մեջ։

Այդպիսի գիտելիքը կարող է դառնալ պրակտիկայի զարգացման գործոն, լուծելով նրա ներքին հակասությունները, քանի որ լինելով ոչ միայն սոկա, այլև հնարավոր փորձի ընդհանրացումը, այն վերարտադրում է առարկան ինչպես նրա իրական ներքին բնութագրումների, այնպես էլ նրա հնարավոր ձևակազմավորումների, նրա փոփոխման օբյեկտիվ միտումների կողմերով։ Այստեղ տեսական միտքն օբյեկտի մեջ որսում է մի այնպիսի «հատվածք», հատկությունների մի այնպիսի համակցություն, որն սոկա պրակտիկայով դեռևս չի բացահայտված, իսկ բուն օբյեկտի մեջ գոյություն ունի սոսկ իբրև հնարավորություն։

Առարկան իր համընդհանրության և անհրաժեշտության մեջ իդեալապես վերարտադրելու այս խնդրի լուծումն ճանապարհին տեսական ճանաչողությունը իր բարձրագույն արդյունքների՝ հիպոթեզների, տեսությունների, դաղափարների մեջ գործ ունի վերացական, իդեալականացված օբյեկտների հետ և առավել չափով հեռանում է պրակտիկայից[1]։

Տեսական վերացական գիտելիքը հակասական է. այն և՝ էականի արտայոլումն է, և՝ հարկավորի, այսինքն՝ իր մեջ պարունակում է այնպիսի բովանդակություն, որը չի համապատասխանում առարկայի բովանդակությանը։ Քանի որ առարկան զգայաբար տրված է սուբյեկտին առարկայական գործունեության ձևով, ապա տեսական գիտելիքի այդ հակասությունը երևան է գալիս իբրև տեսության և պրակտիկայի հակասության դրսևորում։ Գիտելիքի և առարկայի անհամապատասխանությունն այստեղ ընդունում է առարկայի՝ իր հասկացությանն անհամապատասխան լինելու ձև։ Այդպիսի գիտելիքի առարկայական բաղադրամասը չի կարող մասնագատվել առարկայի հասկացությունն իրական առարկային անմիջականորեն համադրելու ճանապարհով, քանի որ այդ առարկան դեռևս պետք է ստեղծվի սուբյեկտի նյութական գործունեությամբ։ Դրա համար էլ գիտելիքի համապատասխանությունն առարկաներին այստեղ մոդիֆիկացվում է որպես առարկայական գործունեության մեջ, պրակտիկայում գիտելիքի իրացման պրոցես։

Ճանաչողության արդյունքները միայն պրակտիկայի միջոցով կարող են գիտակցվել իբրև իրական արդյունքներ։ Բայց տեսության արդյունքներն օբյեկտիվացնելու համար հարկավոր է դրանք «դնել» նպատակի ձևով, որը, ի տարբերություն իրականության տարբերային-գործնական յուրացման մակարդակում կատարվող վերացական նպատակադրման, հանդես է գալիս որպես գիտականորեն առաջադրված նպատակ։ Օբյեկտիվորեն այդպիսի հնարավորություն պարունակվում է տեսական կառուցվածքների բուն էության մեջ որպես օբյեկտների հետ ապագա պրակտիկ գործողությունների իդեալական ամփոփ սխեմաներ, բայց այդ հնարավորության հետագա իրագործման պայմանը վերափոխման համապատասխան նյութական միջոցների առկայությունն է պրակտիկայի այս կամ այն պատմական ձևի սահմաններում։ Որքանով որ հին ձևը բացահայտում է իր սահմանափակությունը (իրագործման համապատասխան միջոցների անբավարարությունը), այդքանով էլ իրականության մեջ

---

1 Մեր խնդիրը չէ տեսական գիտելիքի առանձնահատկության, նրա ստացման միջոցների ու կատեգորիալ կառուցվածքի վերլուծությունը, ինչպես նաև գիտության էմպիրիկ ու տեսական փուլերի փոխհարաբերությունը։ Այդ հարցերի մասին տե՛ս В. С. Швырев, Теоретическое и эмпирическое в научном познании, М., 1978.

նոր, պրակտիկան կանխող արտացոլման ձևերի ամեն մի մարմնավորում իր համար որպես նախադրյալ ունի պրակտիկայի զարգացման նոր մակարդակին և ամենից առաջ վերափոխման ավելի կատարյալ միջոցներին անցնելը։ Պրակտիկայի նոր ձևը ոչ միայն ընդլայնում է առարկայի օբյեկտիվ կապերի ոլորտը (դա կարող է տեղի ունենալ նաև հին ձևի սահմաններում), այլև, շնորհիվ վերափոխման կատարյալ, որակապես կոնստրուկտիվ նոր հատկություններ ունեցող միջոցների ստեղծման, թույլ է տալիս այս վերջինների կիրառելիության սահմաններում հայտնաբերել առարկայի հարաբերականորեն կայուն և անհրաժեշտ ներքին կապերը և, այսպիսով, կոնկրետ առարկան վերարտադրել որպես հատկությունների մի համահավաք ամբողջություն, որն ընդունակ է բավարարելու մարդու ամենաբազմագան պահանջմունքները (պրակտիկայի զարգացման ինտենսիվ ձև)։ Հետևաբար, պրակտիկայի նոր ձևը լուծում է նրա հին ձևի հակասությունը (գործունեության նպատակի և արդյունքի չհամընկնելը) այն բանով, որ ստեղծում է նպատակի իրագործման անհրաժեշտ և համապատասխան միջոցներ։ Իրագործված նպատակը իր գոյության փաստով ոչ միայն վկայում է մարդու նպատակների օբյեկտիվության, «այսկողմանիության» մասին, այլև հաստատում է նրա մտածողության առարկայական ճշմարտությունը, քանի որ այդ ճշմարտության մեջ իր նյութական մարմնավորումն է գտնում «այն հետևանքը, որն արդեն կար աշխատողի պատկերացման մեջ այդ պրոցեսի սկզբին, այսինքն՝ իդեալապես»[8]։

Պրակտիկայի նպատակի և արդյունքների համընկնումը, այսպիսով, ներկայանում է որպես օբյեկտի հետ մտքի համընկնման (ճշմարտության) հիմք, և գիտելիքի ճշմարտության չափանիշն այստեղ ոչ թե օբյեկտն է որպես այդպիսին, ոչ թե նրա մասին գիտելիքն է՝ ըմբռնված կամ որպես փորձի պասսիվ արդյունք (էմպիրիզմ), կամ էլ որպես ինտելեկտի ինքնաստեղծ ունակության արդյունք (ռացիոնալիզմ), այլ գիտելիքն իրականության մեջ մարմնավորելու պրոցեսն է, այսինքն՝ պրակտիկան։ «Պրակտիկան բարձր է (տեսական) իմացությունից,— ընդգծել է Վ. Ի. Լենինը,— որովհետև այն ունի ոչ միայն համընդհանրություն, այլև անմիջական իրականության արժեք»[9]։

Սակայն գիտելիքի օբյեկտիվացման պրոցեսում մարդը, ստեղծելով «երկրորդ բնության» առարկաներ, ստեղծում է ոչ թե իրերի հատուկ կեցություն, այլ հատուկ իրերի կեցություն, որոնց եզակի առարկայական որոշակիությունը միևնույն ժամանակ ներկայանում է իբրև մարդու համընդհանուր էության բացահայտում, որպես «ամեն տեսակի չափերով» ստեղծելու ընդունակ «առարկայական էակ»։ Այդ պատճառով էլ մարդկային աշխատանքի առարկայական արդյունքները, լինելով բնության մեջ պատրաստի ձևով գոյություն չունեցող հատուկ առարկաներ, համընդհանուր փոխկապակցությունների մեջ են մտնում այլ առարկաների հետ կեցության օբյեկտիվ օրենքների հիման վրա։ Դա բնութագրում է պրակտիկան որպես բնության օրենքներով կատարվող պրոցես, այսինքն՝ իբրև օբյեկտիվ պրոցեսի մի այնպիսի ձև, որի արդյունքներն ունեն «ոչ միայն ֆենոմենալ (բառիս հյումիստական և կանտական իմաստով), այլև օբյեկտիվորեն ռեալ նշանակություն»[10]։ Այդ պատ-

8 Կ. Մարքս. Կապիտալ, հ. 1, Երևան, 1954, էջ 189։
9 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 38, էջ 262։
10 Վ. Ի. Լենին. Նույն, հ. 18, էջ 127։

ճառով էլ պրակտիկայով կատարվող ստուգումը ոչ միայն գիտելիքի ստուգում է, այլև նրա չափանիշի, քանի որ օբյեկտիվության ստուգում է անցնում ինչպես գիտելիքը (պրակտիկայի միջոցով), այնպես էլ պրակտիկան (օբյեկտիվ իրականության միջոցով)։ Հետևաբար, գիտելիքի օբյեկտիվացման պրոցեսի տեսականորեն ընդհանրացված արդյունքն իրենից ներկայացնում է օբյեկտի մի այնպիսի սահմանում, որից դուրս են բերված սուբյեկտիվ մոմենտները (ճիշտ է, հարաբերականի սահմաններում, որոնք պայմանավորված են պրակտիկայի զարգացման տվյալ կոնկրետ մակարդակի հնարավորություններով), օբյեկտի մասին պրակտիկայում արդեն իրացված գիտելիքը (գիտակցության ռեֆլեքսն արդեն ստեղծված արդյունքի հանդեպ)՝ այդ իսկ օբյեկտի մասին նախքան այդպիսի իրացում անցած գիտելիքի հետ (առաջ անցնող արտացոլման մակարդակում) համադրելու ճանապարհով։ Ուստի, օբյեկտի լիակատար սահմանումը նրա այնպիսի իմացությունն է, որում «պահվել» են նրա կազմավորման մոմենտները և գիտելիքի օբյեկտիվությունն այստեղ երաշխավորվել է հենց նրա ստացման եղանակով, երբ այն տրվում է իր հիմնավորմամբ հանդերձ։ Սա երրորդ սահմանումն է, որի մեջ ըմբռնվում է առարկայի հիմքը, նրա էությունը (օբյեկտիվ ճշմարտությունը)։

Գիտելիքի մեջ առարկայի վերարտադրությունը սկսվում ու ավարտվում է պրակտիկայում նրա՝ սուբյեկտի պատմականորեն որոշակի պահանջմունքներին համապատասխանող վերարտադրմամբ։

Իր սուբստանցիոնալ ծավալով պրակտիկան, այսպիսով, ներկայանում է որպես առարկայի համակողմանի սահմանման հիմքը, համակարգային այն ամբողջությունը, որի մոմենտների տարբերությունը նրանում արձանագրված ֆունկցիոնալ բազմանշանակության մեջ հանդես է գալիս, Կ. Մարքսի բառերով ասած, իբրև «տարբերություն միասնականի ներսում»[11]։

К ВОПРОСУ О ГНОСЕОЛОГИЧЕСКОМ ОБЪЕМЕ ПРАКТИКИ

РОБЕРТ КАЙЦУНИ

Резюме

Анализ практики как целостного детерминанта познания предполагает рассмотрение форм единства теории и практики в двух аспектах: теоретическое отношение в составе практического (генетический аспект единства) и практическое отношение в составе теоретического (функциональный аспект единства). Синтез генетических и функциональных характеристик демонстрирует практику как системную целостность (субстанциональную основу познания), экспликация которой в ходе становления адекватного знания объекта проходит следующие этапы: 1. воспроизводство объекта в знании первоначально выступает идеальным сопровождением материальной предметной деятельности и имеет своим результатом некоторое абстрактное знание, отражающее объект

[11] К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 46, ч. I, с. 229.

под углом зрения частных, практически значимых его свойств, взятых в своей единичности и обособленности; 2. переход ко второму уровню определения объекта в знании (эмпирическое знание) обусловлен экстенсивным расширением сферы предметного взаимодействия, когда в результате функционирования одного и того же предмета в различных формах деятельности последний обнаруживает некоторые общие, устойчивые связи, что и фиксируется в знании в форме абстрактной всеобщности; 3. третий уровень определения объекта связан с функционированием теоретического знания как идеального опережающего отражения практики. Воспроизводя объект как «единство многообразного», такое знание становится фактором развития практики, разрешения его внутренних противоречий (интенсивная форма развития практики). Осуществленная цель деятельности фактом своего осуществления подтверждает предметную истинность мышления.